Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հունիսի 27-ի «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծված (ներմուծվող) տեխնոլոգիական սարքավորումները, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերը, հումքը և (կամ) նյութերը ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվելու համար «ՔԱՆԱՔԵՌԻ ԿԱՐԻ ՖԱԲՐԻԿԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված հայտը բավարարելու և արտոնությունը կիրառելու մասին» N 796-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը.

1) հավելվածը 10-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 11-13-րդ կետերով.

«

11.	6006220000		Այլ տրիկոտաժե քաթաններ՝ մեքենայագործ կամ ձեռագործ, բամբակե մանվածքից, ներկած	Ներկած, տրիկոտաժե կտոր՝ 100% բամբակ, ներկված, գործված ոչ հիմնահյուսվածքով, մեքենայագործ (հագուստ կարելու համար)	կգ	10 000	Թուրքիա, Չինաստան	35 000 000
12.	5112308001		Կտոր՝ բրդյա և քիմիական մանրաթելերի խարնուրդով, ներկած	Գործվածքներ սանրային մանման բրդյա մանվածքից կամ կենդանիների բարակ մազի սանրային մանման մանվածքից՝ 200 գ/մ²-ից ավելի, բայց 375 գ/մ²-ից ոչ ավելի մակերեսային խտությամբ	մ²	50 000	Չինաստան	200 000 000

13.	5111190000		Բրդյա գործվածք	Գործվածքներ ապարատային մանման բրդյա մանվածքից՝ 67% բուրդ, 33% պ/է՝ նախատեսված կոստյումների համար	մ²	10 000	Չինաստան	60 000 000

».

2) հավելվածի «ԸՆԴԱՄԵՆԸ» պարբերության մեջ «934 080 000» թիվը փոխարինել «1 229 080 000» թվով: